ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն

Փիլիսոփայության Դասընթացի ծրագիր
ասպիրանտների և հայցորդների համար

Երևան – 2011

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Կազմել և հրատարակության պատրաստել է
փիլիսոփայական գիտությունների թեկնածու,դոցենտ
Մ.Ա.Հարությունյանը

Գրախոսներ՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Է.Ս.Մարկարյան
փիլիսոփայական գիտությունների դոկտոր պրոֆեսոր
Է.Ռ.Գրիգորյան

Ոչ լալ, ոչ խնդալ, այլ հասկանալ

Բարուխ Սպինոզա

ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և կենտրոնների ասպիրանտների և հայցորդների համար նախատեսված «Փիլիսոփայություն» դասընթացի ծրագիրը կառուցված է այնպես, որ փիլիսոփայական գիտելիքը ծառայի ապագա գիտնականների մտածողության զարգացմանը, արդի գիտության փիլիսոփայական հիմնախնդիրների իմաստավորմանը:

Դասընթացը հետապնդում է կարևոր մի նպատակ ևս՝ փիլիսոփայությունը դարձնել մասնագիտական մտածողության և գործունեության գնահատման անկանխակալ եղանակ, որից կարող են օգտվել գիտության ցանկացած բնագավառի մասնագետները: Այն կոչված է օգնել ասպիրանտներին և հայցորդներին ընդլայնելու իրենց հոգևոր մտահորիզոնը, հաղթահարելու մասնագիտական սահմանափակությունը, քննադատական մոտեցում ցուցաբերելու այնտեղ, որտեղ երևույթներն արտաքուստ հասկանալի ու մատչելի են թվում:

Դասընթացի մեթոդաբանական նպատակը քննական մտածողության, ամբողջը մասնատելու և մասերն ամբողջության մեջ դիտելու, պատճառահետևանքային կապերը վերլուծելու, կարծրացած պատկերացումները հաղթահարելու, ստեղծագործական ունակության պատվաստումն է:

Խորամուխ լինելով փիլիսոփայության մեջ՝ ապագա գիտնականը ձեռք կբերի բարդ ու հակասական իրականությունն իմաստավորելու և գնահատելու աշխարհայացքային կարողություն:

Փիլիսոփայության շնորհիվ ապագա գիտնականը կարող է իրատեսորեն գնահատել իր ճանաչողական հնարավորությունները:

Փիլիսոփայության իմաստն ու նշանակությունը ոչ այնքան հավերժական հիմնախնդիրների լուծումն է, որքան դրանց առաջադրումը, ինչպես նաև մեր բանականության իրական հնարավորությունների բացահայտումը (Բ.Ռասել):

Ներկա ծրագիրը բաղկացած է համառոտ պատմափիլիսոփայական ներածությունից, ինչպես նաև «Գիտության փիլիսոփայություն» և «Արդի փիլիսոփայության հիմունքները» բաժիններից: Վերջիններիս օգնությամբ կարելի է կողմնորոշվել գիտության բնագավառում ծագող աշխարհայացքային և մեթոդաբանական հարցերում: Նաև պարզել աշխարհի գիտական պատկերի, ընդհանուր գիտական մտածողության, մասնագիտական արժեհամակարգի մեջ ներկայումս ընթացող փոփոխությունների նախադրյալներն ու միտումները:

Ծրագրին հավելվում են առարկայից քննության հարցաշարը, ռեֆերատների օրինակելի թեմատիկան և գրականության ցանկը:

Դասընթացի ուսումնաթեմատիկ պլան

Բաժիններ և թեմաներ	Դասախոսություն (ժամ)
I.Փիլիսոփայական մտքի պատմության համառոտ ակնարկ	
1. Փիլիսոփայությունը մշակույթի համակարգում	2
2. Անտիկ փիլիսոփայություն	2
3. Միջին դարերի փիլիսոփայություն	2
4. Վերածննդի դարաշրջանի և նոր ժամանակի փիլիսոփայություն	2
5. 18-19-րդ դարերի եվրոպական փիլիսոփայություն	2
II.Գիտության փիլիսոփայություն	
1. Իմացությունը որպես փիլիսոփայական հիմնախնդիր	2
2. Գիտության փիլիսոփայության առարկան	2
3. Գիտությունը որպես մշակույթի մաս	2
4. Գիտության կառուցվածքային մակարդակները և գիտական իմացության մեթոդները	2
5. Սոցիալ-հումանիտար գիտությունները և մարդու հիմնախնդիրը	2
III. Ժամանակակից փիլիսոփայության հիմունքները	
1. Արդիականության հասկացությունը	2
2. Ժամանակակից հոգևոր վիճակը	4
3. Լեզվի փիլիսոփայությունը	4
4. Արդի սոցիալական փիլիսոփայության առանձնահատկությունները	4
5. Պատմության արդի փիլիսոփայությունը	4
6. Փիլիսոփայական Մարդաբանություն	4
7. Մշակույթի փիլիսոփայություն	4
8. Գլոբալ հիմնախնդիրների փիլիսոփայություն	4

Ընդամենը՝ 50

Բաժին Առաջին

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Թեմա 1
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մշակույթը որպես համակարգ: Նյութական և հոգևոր մշակույթ: Աշխարհայացքը, հիմնական կողմերը, ենթահամակարգերը, պատմական տիպերը: Աշխարհայացքի գիտականության հիմնախնդիրը: Փիլիսոփայությունը որպես մշակույթի աշխարհայացքային հիմք: Փիլիսոփայության առաարկան, հետազոտման մեթոդը, գիտելիքների և հիմնախնդիրների բնույթը և հիմնական գործառույթները: Փիլիսոփայությունը որպես գիտելիքների համակարգ՝ գոյաբանություն (օնթոլոգիա), Գործունեաբանություն (պրաքսիոլոգիա), իմացաբանություն (գնսեոլոգիա) և արժեբանություն (աքսեոլոգիա):

Թեմա 2
ԱՆՏԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Հին հունական փիլիսոփայությունը սաղմնային ձևով բովանդակում է ավելի ուշ ժամանակի գրեթե բոլոր փիլիսոփայական համակարգերը:

Անտիկ փիլիսոփայության դասական դարաշրջան: Շրջադարձ դեպի մարդը: Սոփեստներ. «Մարդն իրերի չափանիշն է» (Պրոտագորաս): Գիտելիքի հարաբերականության գաղափարը: Ժխտելով գիտելիքի մեջ օբյեկտիվ ճշմարտությունը՝ սոփեստները իրավացիորեն ընդգծում էին ճշմարտության, գիտելիքի սուբյեկտիվ մարդկային կողմը:

<u>Սոկրատես (470-399 մ.թ.ա.)</u>: Անձնավորությունը և ճակատագիրը:

Ուսմունք մարդու մասին: Ուսմունք մեթոդի մասին: Սոկրատեսի բարոյագիտական փիլիսոփայության նշանաբանն էր Դելֆյան տաճարի ճակատին գրված գուշակի նշանավոր խոսքերը՝ «Ճանաչի՛ր ինքդ քեզ»: Սոկրատեսն ասում էր, որ ինքն իմաստուն չէ, ինչպես սոփեստներն են իրենց անվանում: Սակայն մարդը, որը ձգտում է աստվածային իմաստության, կարող է իմաստասեր լինել: Փիլիսոփայություն բառը կազմված է երկու արմատից «ֆիլեո»՝ սեր և «սոֆիա»՝ իմաստություն բառերից: Բառացիորեն նշանակում է իմաստասիրություն: Ճշմարտությունը ծնվում է երկխոսության ընթացքում առաջադրված տեսակետների հակասության բացահայտման

և հաղթահարման գործընթացում: Սոկրատեսի համար դիալեկտիկան ճշմարիտ սահմանումների հանգելու միջոց է:

Պլատոն (428-347 մ.թ.ա.): Գաղափարների տեսությունը: Իմացության մասին ուսմունքը: Մարդու մասին ուսմունքը: Պետության մասին ուսմունքը: «Իդեայի» (էյդոսի) հասկացությունը: Իմացությունը որպես «վերհիշում»: Իդեալական պետությունը որպես արդարության և բարիքի մարմնավորում: Նյութական աշխարհի գերզգայական, բանականությամբ ըմբռնվող հիմքը էյդոսն է՝ տեսակը, գաղափարը, որն ընկած է ամեն մի իրի հիմքում: Էյդոսից ածանցվում է «իդեա» արտահայտությունը, որն իր հերթին ոչ այլ ինչ է, եթե ոչ իրի էությունը: Պլատոնի ուսմունքը իմացության մասին շարադրված է «Մենոն» երկխոսության մեջ: Նա ելնում է այն սկզբունքից, որ այն, ինչ ենթակա է իմացության, արդեն իսկ գոյություն ունի, հակառակ դեպքում, ինչպե՞ս կարելի է պատկերացնել որոնումն այն բանի, ինչը գոյություն չունի: Ուստի իմացությունն այլ բան չէ, եթե ոչ «անամնեզ», այսինքն՝ յուրօրինակ մի «վերհիշում», վերակենդանացումն այն բանի, ինչն արդեն ի սկզբանե գոյություն ունի մեր հոգում:

Պլատոնի սոցիալ-քաղաքական հայացքները ներկայացված են նրա «Պետություն» աշխատության մեջ: Պետության հինքը աշխատանքի բաժանումն է իր քաղաքացիների միջև, որը համապատասխանում է հոգու մասերի պլատոնյան դասակարգմանը:

Հոգու բարձրագույն շերտին՝ բանականությանը, համապատասխանում է կառավարող փիլիսոփաների դասը, զգացող մասին՝ զինվորականության դասը, որը վարժեցված էր իր արհեստին: Պետության կայունությունը և ուժը կախված է նրա քաղաքացիների՝ իրենց երկրին անկաշառ նվիր-վածությունից: Մասնավոր սեփականությունը հակադիր շահերի աղբյուրն է, որը բզկտում է պետությունն ու հասարակությունը՝ ստվերի մեջ թողնելով պետության շահերը:

Հասարակության կատարելագործման և պետության ամրապնդման շահերից ելնելով՝ Պլատոնն առաջարկում է կառավարողների և զինվորականության համար արգելել մասնավոր սեփականությունը: Եվ քանի որ մասնավոր սեփականության ծագմանը նպաստում է մենամուսնական ընտանիքը, Պլատոնը նախատեսում է ընտանիքի վերացում և կանանց հանրայնացում՝ երեխաների դաստիարակությունը համարելով պետության առաջնային գործը:

Արիստոտել (384-322մ.թ.ա.): Գիտությունների դասակարգումը: Մետաֆիզիկա: Ֆիզիկա և հոգեբանություն: Գործնական գիտություններ. էթիկա և քաղաքականություն:

Արիստոտելը կեցության և նրա իմաստների մասին: Աշխարհը որպես նպատակների ու ձևերի աստիճանակարգ: Ուսմունքը կոսմոսի մասին: Աշխարհի հոգին: Մարդու հոգին: Մարդը որպես «քաղաքական կենդանի»: «Օրգանոնը» որպես գիտելիքների և բանախոհության միջոց:

Արիստոտելը մետաֆիզիկային, այսինքն նրան, ինչն ինքն անվանել է «Առաջին փիլիսոփայություն», տալիս է չորս սահմանում: Դրանք են.

- Առաջին կամ բարձրագույն սկզբունքների հետազոտում,
- «Կեցության» ճանաչում,
- Սուբստանցիայի մասին գիտելիք,
- Գիտելիք Աստծո և գերզգայական սուբստանցիայի մասին,
- Ձև և մատերիա՝ կեցության երկու անբաժան սկզբնահիմքերը

Անմարմին ձևը՝ ակտիվ, գործունակ և շարժունակ նախասկիզբն է՝ իրերի արարիչը: Սկզբնամատերիան զուրկ է որևէ ձևից, պասիվ զանգված է: Վերջնամատերիան կամ ձևավորված մատերիան այն է, ինչից ձևավորվում և բաղկացած է իրը: Ձևը շարժման աղբյուրը և նպատակն է: Ձևերի ձևը առաջնաշարժիչն է՝ Աստվածը: Ուսմունքը չորս պատճառների մասին:

Անհատականի իմացությունը.

- զգայական ընկալում՝ առարկայի ձևի զգացողություն առանց մատերիայի,
- «փորձ»՝ զգայական ընկալումների կամ հիշողությունների (պատկերացման) կրկնելիություն, բարձրագույն սկզբունքների գիտակցման առիթ:

Ընդհանուր իմացություն.

- բանականություն՝ հավերժական սկզբունքների աննախադրյալ հայեցողություն, մտածողության մտածողություն,
- դատողություն՝ նախադրյալ ունեցող դիսկուրսիվ մտածողություն (ինտելեկտի մեջ ոչինչ չկա, որ նախապես չլիներ զգայության օրգանների մեջ):

Արիստոտելը՝ ձևական տրամաբանության հիմնադիր: Արիստոտելյան սիլոգիզմ և սիլոգիզմի հիմնական սկզբունքը կամ սիլոգիզմի աքսիոմ, որը Արիստոտելը ձևակերպում է այսպես. «Երբ մի որևէ բան ստորոգվում է մի այլ բանի՝ որպես ենթակայի, ապա այն ամենը, ինչ ասվում է ստորոգյալի մասին, կասվի նաև ենթակայի մասին»:

<u>Էպիկուրի (341-270 մ.թ.ա.) փիլիսոփայությունը:</u>

Բնության մասին իր պատկերացումներով Էպիկուրը Դեմոկրիտի հետևորդն էր, թեև որոշ էական կետերում սկզբունքորեն տարբերվում էր նրանից:

Փիլիսոփայության գլխավոր խնդիրն Էպիկուրը համարում է բարոյագիտությունը: Նրան մտահոգում էր այն, թե ինչպես և հանուն ինչի պետք է ապրի մարդը, որպեսզի համապատասխանի իր կոչմանը: Ո՞րն է նրա կյանքի իմաստը, ինչո՞ւ է ապրում մարդը, և ո՞րն է նրա կյանքի նպատակը: Էպիկուրն այն համոզմունքին էր, որ մարդը, որպես բնության մասնիկ, պետք է ապրի նրա հետ ներդաշնակ և վայելի այն հաճույքները, որոնք տրված են նրան բնությունից:

Հենց բնության կողմից տրված վայելքների մեջ է մարդկային կյանքի իմաստը, նրա երջանկությունը: Երջանկության չափանիշը հաճույքն է: Սակայն պետք է Էպիկուրի հետևությունը ճիշտ հասկանալ: Նա այնպիսի վայելքների կողմնակից չէ, որոնք տանում են դեպի անմիտ, ինքնանպատակ

շքեղություն ու զեղություն, անզուսպ կրքերի բավարարում: Ընդհակառակը, ըստ էպիկուրի, մարդը պետք է ձգտի այնպիսի հաճույքների, որոնք նրան դառնություն չեն պատճառում: Խոսքը չափավոր, բանական հաճույքների մասին է: Էպիկուրը տարբերում էր երեք կարգի հաճույք.

բնական՝ կյանքի համար անհրաժեշտ,

բնական՝ կյանքի համար ոչ անհրաժեշտ,

ոչ կյանքի համար անհրաժեշտ և ոչ էլ բնական: Մարդը պետք է ձգտի առաջինին և ձեռնպահ մնա մյուսներից: Լիակատար ներքին անվրդովությունը փիլիսոփայի երջանկությունն է: ***Առաքինություններից առանձնապես կարևորում էր արդարամտությունը (օրենքների հարգումը), խիզախությունը և չափավորությունը:***

Ստոիկների կարծիքով, երջանկությունն ավելի հոգու անխռովությունն է, որին կարելի է հասնել վայելքներից ձեռնպահ մնալու և ճակատագրի անակնկալներին պատրաստ լինելու միջոցով: Մարդկային տառապանքներն սկսվում են այնժամ, երբ վայելքներին ընտելացած մարդը ճակատագրի քմահաճույքով միանգամից հայտնվում է նրա հարվածների տակ: Պատրաստ չլինելով այդ հարվածներին՝ նա սեփական կյանքն ընկալում է որպես ողբերգություն: Չ՞է որ նա տևականորեն սովոր էր կյանքի հաճույքներին և բնական էր համարում, որ ինքն անպայման երջանիկ պետք է լինի:

Թեմա 3
ՄԻՋՆԱԴԱՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Միաստվածությունը՝ բազմաստվածության ժառանգորդ:

Աշխարհն իբրև աստվածային արարչագործություն: Օգոստինոս Երանելի:

Քրիստոնեական միաստվածությունն իր մեջ մարմնավորում է բացարձակ այնկողմնային հոգևոր էությունը, որն ընդունակ է արարելու աշխարհը: Աստված արարել է աշխարհը ոչնչից, մինչդեռ նախկին աստվածություններն այն արարում էին արդեն իսկ առկա նյութից: Քրիստոնեության աստվածն ամենազոր է, որովհետև նա ընդունակ է անելու այն, ինչին հասու չեն հեթանոս աստվածները, և ինչը հավատացյալ մարդու հրաշագործություն է:

Քրիստոնեական փիլիսոփայության սկզբնավորողը Օգոստինոս Երանելին (354-430 մ.թ.) է: «Փիլիսոփայություն է կոչվում ոչ թե ինքնին իմաստությունը,- գրում է նա,- այլ սերը դեպի իմաստությունը. եթե դու նրան դիմում ես, ապա թեև իմաստուն չես լինի, քանի դեռ ապրում ես (քանի որ իմաստությունը Աստծո մեջ է և մարդուն մատչելի չէ), սակայն եթե բավականաչափ քեզ հաստատես սիրո մեջ, ապա հոգիդ այս կյանքից հետո, այսինքն, երբ կդադարես մարդ լինելուց, անկասկած կտիրի նրան»:

Սխոլաստիկ փիլիսոփայությունը: Աստծո կեցության ռացիոնալ, բանական ապացույցները: Ունիվերսալիաների հիմնախնդիրը: Նոմինալիզմի և ռեալիզմի բանավեճը:

Փիլիսոփայությունը՝ որպես աստվածաբանության սպասավոր: Սխոլաստիկան՝ որպես դպրոցական փիլիսոփայություն: Նշանավոր աստվածաբան Կաթոլիկ եկեղեցու պաշտոնական գաղափարախոսության հիմնադիր, աստվածաբան Թովմաս Աքվինացին՝ սխոլաստիկայի խոշորագույն ներկայացուցիչ (1225-1274թթ.): Իր գլխավոր խնդիրն էր համարում ապացուցել Աստծո գոյության անխուսափելիությունը և տեսականորեն հիմնավորել քրիստոնեական գաղափարախոսությունը:

Միջնադարում առանձնահատուկ կարևորություն է ստանում ընդհանուրի և եզակիի հիմնախնդիրը՝ ռեալիզմ՝ (լատ. realis - առարկայական) և նոմինալիզմ (լատ. nomen - անուն, անվանում): Ռեալիստները պնդում էին, որ ռեալը, իրականը ոչ թե շրջապատող եզակի առարկաներն են, այլ նրանց գաղափարները կամ ընդհանուր հասկացությունները: Ըստ Աքվինացու, դրանք գոյություն ունեն Աստծո բանականության մեջ, որոնց նմանությամբ Արարիչը ստեղծել է կոնկրետ եզակի իրերը: Քանի որ էություններն ըմբռնվում են բանականությամբ, ուրեմն, ըստ Աքվինացու, բանականությունն առաջնային է արարված աշխարհի եզակի իրերի նկատմամբ:

Նոմինալիստները պնդում էին, որ ընդհանուր հասկացությունները միայն անուններ, բառանշաններ են, իսկ տրամաբանությունը՝ լեզվաբանական վերլուծության և քննադատության գործիք:

<u>Միջնադարյան հայ փիլիսոփայության միտքը:</u> Դավիթ Անհաղթ, Եզնիկ Կողբացի, Անանիա Շիրակացի:

Դավիթ Անհաղթը փիլիսոփայության մասին. ***«Ովքեր գեթ մեկ անգամ փիլիսոփայության խոսք են տենչում և պատեհ առիթ են ունենում լոկ մատի ծայրով ճաշակել նրա քաղցրությունը, նրանք, բոլոր երկրավոր հոգսերին «մնաս բարյավ» ասելով, ողջախոհ մի մոլորությամբ անձնատուր են լինում նրան»:***

Թեմա 4
ՎԵՐԱԾՆՆԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Մարդակենտրոնությունը (անտրոպոցենտրիզմ) վերածննդի աշխարհընկալման հիմնարար սկզբունքն է. <u>մարդը ոչ միայն բնության թագն ու պսակն է, այլև նրա տերը:</u> Վերածնունդը մի ժամանակաշրջան էր, որ տիտանների կարիք ուներ և ծնեց տիտաններ՝ մտքի, խանդավառության, օժտվածության, կրքոտության, խորագիտակության իմաստով. Լեոնարդո Դա Վինչի, Բենվենուտտո Չելլինի, Միքելանջելո, Ալբրեխտ Դյուրեր, Ալբերտի, Ռաֆայել և այլոք:

Մտավորականի հատկանիշները, գործունեության ոլորտները: Չկար իրեն մտավորական համարող մեկը, որ մի քանի երկարատև ճամփորդություններ ձեռնարկած չլիներ, որ չփայլեր գիտության և արվեստի մի քանի բնագավառներում, որ չտիրապետեր մի քանի լեզվի…

Իզուր չի ասված, որ եթե Վերածննդի հսկա մտավորականները «խոսում էին, ապա այսօրվա մտավորականներս «կմկմում ենք»…

Պանթեիզմը՝ Վերածննդի դարաշրջանի բնափիլիսոփայություն: Աստված բնությունից դուրս էություն չէ, այլ իրերի մեջ հենց բնությունն է (Ջորդանո Բրունո):

Հայկական Վերածնունդ (X դար): Նարեկացու փիլիսոփայությունը: «Մատյան Ողբերգության»:

Թեմա 5
ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընդդեմ սխոլաստիկայի՝ հանուն գիտության:
Մեթոդի խնդիրը փիլիսոփայության մեջ (Ֆ. Բեկոն, Ռ. Դեկարտ)

Ֆրենսիս Բեկոնը (1561 - 1626) որպես նոր ժամանակների փիլիսոփայության և փորձնական գիտության մեթոդաբանության հիմնադիր: «Գիտելիքն ուժ է» կարգախոսը Բեկոնի համար ուներ իրական, շոշափելի իմաստ: Փորձը որպես իմացության միակ և ճշմարիտ աղբյուր:

էքսպերիմենտը որպես ինդուկտիվ հիպոթեզներից բխող դեդուկտիվ հետևությունների ստուգման միջոց: Աշխարհի ճանաճողությունը սկսվում է իրականության եզակի, առանձին փաստերից և դրա հիման վրա է միայն ընթանում դեպի ընդհանուր եզրակացությունները, ուսումնասիրվող փաստերի էության ճանաչումը: Իր մեթոդը Բեկոնն անվանում է նոր օրգանոն: Գիտնականի աշխատանքը, Բեկոնի համոզմամբ, պետք է նմանվի մեղվի աշխատանքին, որը ծաղկից ծաղիկ է թռչում՝ հավաքելով նրանց նեկտարը և սինթեզում է մեղր:

Ռենե Դեկարտ (1563 - 1650) և իմացության մեթոդի խնդիրը: Եթե Բեկոնի համար իմացության ճշմարիտ մեթոդը ինդուկցիան է, ապա ռացիոնալիզմի նախահայր Դեկարտի փիլիսոփայության մեջ՝ սկեպսիսը (կասկածը): Փիլիսոփայության ելակետը Դեկարտի համար ինքնագիտակցությունն է՝ «Մտածում եմ, հետևաբար, գոյություն ունեմ»:

Մաթեմատիկայի բնագավառում Դեկարտը անալիտիկ երկրաչափության ստեղծողներից մեկն է: Մեխանիկայի մեջ մատնանշել է շարժման ու հանգստի հարաբերականությունը, ձևակերպել է ազդեցության և հակազդեցության ընդհանուր օրենքը, ինչպես նաև երկու ոչ առաձգական մարմինների հարվածի դեպքում շարժման լրիվ քանակի պահպանման օրենքը:

Թոմաս Հոբս (1588 -1679) - անգլիական մատերիալիստ փիլիսոփա: Աշխարհն, ըստ Հոբսի, մեխանիկական օրենքներին ենթակա մարմինների համախումբ է: Շարժումների շարքին էր դասում նաև կենդանիների և մարդու կյանքը: Իմացության ուսմունքում քննադատում էր բնածին գաղափարների մասին Դեկարտի տեսությունը: Բոլոր գաղափարները բխեցնում էր զգայություններից, զարգացնում էր այն ուսմունքը, ըստ որի

գաղափարները վերամշակվում են համեմատման, զուգակցման միջոցով: Պաշտպանում էր հասարակական դաշինքի տեսությունը:

Ջոն Լոկկ (1632 - 1704) - անգլիացի մատերիալիստ փիլիսոփա: Մերժելով Դեկարտի՝ բնածին գաղափարների ուսմունքը, Լոկկը բոլոր գաղափարների միակ աղբյուրը համարում է փորձը: «Պարզ» գաղափարները ծագում են զգայարանների վրա արտաքին իրերի ներգործության հետևանքով (զգայության գաղափարներ), կամ հոգու վիճակին ու գործունեությանն ուղղված ուշադրության հետևանքով (ռեֆլեքսիայի գաղափարներ): Զգայության գաղափարների միջոցով մենք ընկալում ենք իրերի մեջ առաջնային կամ երկրորդային հատկանիշները: Հետևելով Հոբսին, Լոկկն ընդհանուր գիտելիքի հնարավորության պայմանը համարում էր լեզուն: Պետության դերը, ըստ Լոկկի, ազատության պահպանումն է, աշխատանքով ձեռք բերված սեփականության պահպանումը:

Դեյվիդ Հյում (1711- 1776) անգլիացի իդեալիստ փիլիսոփա, հոգեբան, պատմաբան: Հավաստի իմացության միակ առարկան, ըստ Հյումի, մաթեմատիկական օբյեկտներն են, հետազոտության մյուս բոլոր առարկաները վերաբերում են փաստերին, որոնք չեն կարող տրամաբանորեն ապացուցվել, այլ բխեցվում են միայն փորձից: Ըստ Հյումի, իրականությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ «տպավորությունների» հոսք, որի պատճառները մարդու համար անհայտ ու անհասանելի են: Այն հարցը, թե գոյություն ունի՞ արտաքին աշխարհը, թե ոչ, նա համարում էր անլուծելի: Նրա իմացաբանության մեջ կարևորվում է պատճառականության մասին ուսմունքը: Ըստ Հյումի, պատճառականության սկզբունքի համար ոչ մի այլ հիմքեր չկան, բացի հոգեբանական սովորությունից և հավատից: Պրակտիկ համոզվածության աղբյուրը ոչ թե տեսական գիտելիքն է, այլ հավատը: Հյումի սկեպտիցիզմը նրա էմպիրիզմի կոնկրետ արտահայտությունն է:

Ջորջ Բերկլի (1685 - 1753) - «սուբյեկտիվ իդեալիզմի նահապետ»: Նա գտնում էր, որ մարդն անմիջականորեն ընկալում է միայն իր «իդեաները» (զգայությունները), և մարդու համար իրերի գոյությունը նրանց ընկալելիությունն է (esse est percipi – լատ. գոյություն ունենալ նշանակում է լինել ընկալելի): Աշխարհը, պնդում էր Բերկլին, մեր զգայությունների համակցությունն է, իսկ զգայությունները՝ մարդուն ներհատուկ, արտաքին աշխարհով չպայմանավորված իրողություններ, որոնցով նա օժտված է շնորհիվ աստվածային կամքի:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԻՏՔԸ 18-19 ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Ֆրանսիայում Լուսավորչականության շարժումը գլխավորում էին Վոլտերը, Դիդրոն, Հոլբախը, Լամետրին և Ռուսոն:

Կրոնական հավատին Վոլտերը հակադրում էր դեիզմը, մի տեսակետ, ըստ որի, Աստված իր գործն ավարտել է աշխարհն արարելով, որից հետո այն շարժվում և զարգանում է իրեն ներհատուկ օրենքներով:

Հոլբախը՝ իր «Բնության համակարգում» պաշտպանում է աշխարհի ճանաչելիության մատերիալիստական սկզբունքը՝ բնության բոլոր պրոցեսների հիմքը մատերիան է:

Հասարակական հակասությունների աղբյուրը Ռուսոն համարում էր անհավասարությունը, որի պատճառը թաքնված է գույքային անհավասարության մեջ: Ով առաջինը ցանկապատեց հողամասը, ասելով՝ «սա իմն է», և գտավ բավականաչափ պարզամիտ մարդկանց, ովքեր հավատ կնծայեին իրեն, հենց նա էլ քաղաքացիական հասարակության հիմնադիրը դարձավ: Պետությունն իր գոյությամբ էլ ավելի խորացրեց սոցիալական անհավասարությունը: Ռուսոն հասարակության հակասությունների հաղթահարման ուղին տեսնում էր դաստիարակության մեջ:

<u>Իմանուել Կանտ (1724 - 1804)</u> - գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր: Փիլիսոփայությունը գիտություն է ոչ թե աշխարհի, այլ նրա ճանաչման հնարավորությունների, պայմանների ու սահմանների մասին:

Տեսական բանականության սահմանները. գիտելիքը՝ երևույթների իմացության (կամ «մեզ համար իրերի») արդյունք: Ընկալվող առարկայից զգայական տպավորությունների քաոսային հոսքը, «տեղավորվելով» տարածության և ժամանակի ապրիորի հայեցողության ձևերի մեջ, կարգավորվում, կանոնավորվում և դառնում է ընկալվող առարկայի զգայական պատկեր:

Ընկալվող առարկան «կառուցվում է» իբրև զգայականության և ժամանակի սուբյեկտիվ հայեցողության ձևեր: Ինչ վերաբերում է դատողականությանը, ապա Կանտի տեսակետից, դա ևս իմացության սուբյեկտի ապրիորի կարողությունն է:

Դատողականության ընդհանուր դերն այն է, որ նա զգայականությամբ ձեռք բերվածը տեղավորում է հասկացության մեջ՝ միասնություն սահմանելով նրանում: Դատողականության ապրիորի ձևերն են՝ հասկացությունները և կատեգորիաները՝ սուբստանցիան, պատճառականությունը, անհրաժեշտությունը: Օժտված լինելով դատողականության ապրիորի ձևերով՝ ճանաչող սուբյեկտը շրջապատող իրականության երևույթների բազմազանությունը «տեղավորում է» մտքի որոշակի ձևերի մեջ, դասակարգում դրանք՝ սահմանելով դրանցում կարգ և միասնականություն:

Դատողականության և բանականության կանտյան ըմբռնման տարբերակումը:

Մարդը սովորաբար ձգտում է իմանալ իրականությունն իր բացարձակ ձևերի մեջ և իր դատողությամբ հանգում է ինչ-որ գաղափարների: Չգտելով բանականության այս գաղափարին՝ դատողականությունն ընկնում է անլուծելի հակասությունների՝ անտինոմիաների մեջ: Այդ

հակասությունները Կանտն անվանում է տրանսցենդենտալ դիալեկտիկա: Օրինակ, մենք կարող ենք ապացուցել, որ «Աշխարհն ունի սկիզբ ժամանակի մեջ և սահման տարածության մեջ» և հակառակը՝ «Աշխարհը չունի սկիզբ ժամանակի մեջ և սահման տարածության մեջ»: Միմյանց հակասող այս դրույթները ապացուցելի են միաժամանակ: Դրանից բխում է, որ նրանցից ոչ մեկը ճշմարիտ լինել չի կարող:

Գործնական բանականություն, որի առաջին հիմնադրույթն է ազատությունը կամ կամքի ինքնիշխանությունը և բարի կամքը, որպես բարոյականության բարձրագույն սկզբունք:

Մարդկային կամքը բացարձակապես ազատ է: Նա ազատ է վեր բարձրանալու զգայականից, կրքերից, ցանկություններից ու գայթակղություններից: Նրա սեփական էությունը թելադրում է մշտապես առաջնորդվել «անառարկելի հրամայականի» («կատեգորիկ իմպերատիվի») պահանջով՝ դիտելով մարդուն իբրև նպատակ, այլ ոչ թե միջոց:

<u>Գեորգ Հեգել (1770 -1831)</u> -- գերմանացի փիլիսոփա, օբյեկտիվ իդեալիստ, նրա դիալեկտիկ փիլիսոփայության ելակետային դրույթն է կեցության և մտածողության նույնությունը: Այսինքն՝ ռեալ աշխարհի ըմբռնումը որպես իդեայի, հասկացության, այն է՝ հոգու դրսևորում: նույնությունը որպես բացարձակ իդեայի ինքնաճանաչման պատմականորեն զարգացող գործընթաց:

Իր զարգացման մեջ բացարձակ իդեան անցնում է երեք էտապ՝

1.Իդեայի զարգացումն իր ներսում, «զուտ մտածողության տարերքում»: Տրամաբանություն, որտեղ, իդեան իր բովանդակությունը բացահայտում է մեկը մյուսի հետ կապված և մեկը մյուսին անցնող տրամաբանական կատեգորիաների համակարգում:

2. Իդեայի զարգացումն «այլակեցության ձևով»: Այսինքն՝ բնության ձևով, բնության փիլիսոփայություն, ընդ որում բնությունը, ըստ Հեգելի, չի զարգանում: Այն ծառայում է միայն որպես տրամաբանական կատեգորիաների արտաքին դրսևորում, կատեգորիաներ, որոնք կազմում են նրա հոգևոր էությունը:

3. Ոգու փիլիսոփայություն՝

ա) սուբյեկտիվ ոգի (մարդաբանություն, ֆենոմենոլոգիա, հոգեբանություն);

բ) օբյեկտիվ ոգի (իրավունք, բարոյականթյուն, պետություն);

գ) բացարձակ ոգի (արվեստ, կրոն, փիլիսոփայություն):

Հեգելյան փիլիսոփայության մեջ հստակորեն ուրվագծվում է երկու տեսանկյուն: Մեկը նրա օբյեկտիվ իդեալիզմի համակարգն է, մյուսը՝ այդ համակարգի կառուցման դիալեկտիկական եղանակը: Հեգելն այն կարծիքին է, որ բացարձակ իդեայի շարժման դրդապատճառը և աղբյուրը հենց հակասությունն է նրա և առարկայի միջև: Կեցության հիմնարար օրենքը զարգացման օրենքն է, որի մասնավոր դրսևորումներն են հակասության (հակադրությունների միասնության և պայքարի) օրենքը,

քանակական և որակական փոփոխությունների փոխադարձ անցման օրենքը և բացասման օրենքը:

Հեգելյան դիալեկտիկան հռչակում է այն գաղափարը, որ իրականության մեջ չկա հավիտենապես անփոփոխ բան, և կործանման է դատապարտված այն ամենն, ինչն ապրել է իր դարը: Կեցության և մտածողության նույնության սկզբունքից բխում է ևս մի կարևոր հետևություն՝ այն, ինչ իրական է, բանական է, և բանական է այն, ինչ իրական է:

<u>Օգյուստ Կոնտի (1789-1857)</u> «Պոզիտիվ փիլիսոփայության» ծրագիրը: Փիլիսոփայությունը և գիտությունը, փիլիսոփայության առարկան: Գիտությունների դասակարգումը: Օ.Կոնտի «պատմության ընդհանուր օրենքը»: Սոցիոլոգիան գիտությունների համակարգում:

<u>Հերբերտ Սպենսերի (1820-1903)</u> էվոլյուցիոնիզմը:Հասարակության օրգանական տեսությունը: <u>Ջ.Միլը(1806-1873)</u> և տրամաբանության հոգեբանական հիմքերը: Դարվինիզմը և սոցիալ-դարվինիզմը **(Գումպլովիչ, Ռաթցենհովեր, Սմոլ, Սամներ** և ուրիշներ**):** Բնագիտական մատերիալիզմ: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ֆիզիկայի ճգնաժամը: «Ոչ թե մատերիան չքացավ, այլ չքացավ այն սահմանը, մինչև որը մենք գիտեինք մատերիան»: Էմպիրիոկրիտիցիզմ (փորձաքննադատություն), (Է.Մախ,Ռ.Ավենարիուս):

<u>Կարլ Մարքս (1818-1883) և Ֆրիդրիխ Էնգելս (1820-1895)</u> – մատերիալիստական դիալեկտիկայի հիմնադիրներ: «Հասարակական-տնտեսական ֆորմացիա» մարքսյան հասկացությունը:

Թեմա 6
XX ԴԱՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

Կյանքի փիլիսոփայությունից դեպի հերմենևտիկա: Էկզիստենցիալիզմ և արմատական գոյաբանություն (Հայդեգեր, Սարտր, Քամյու):

Ազատությունը որպես փիլիսոփայական հիմնահարց: Ազատության փիլիսոփայական մեկնաբանությունները (Էրիխ Ֆրոմ):

Հուսեռլի ֆենոմենոլոգիան:

Վերլուծական փիլիսոփայություն (Ֆրեգե, Ռասել, Վիտգենշտայն):

Տրամաբանական պոզիտիվիզմ, հետպոզիտիվիզմ (Պոպեր, Լակատոս, Կուն, Ֆեյերաբենդ): Վիտգենշտայնի լեզվաբանական փիլիսոփայությունը: Վերլուծականություն:

Ստրուկտուրալիզմից դեպի հետմոդեռնիզմ (Միշել Ֆուկո,Ժակ Դերիդա): Դեկոնստրուկտիվիզմ (Ժակ Լիոթար):

Հայ փիլիսոփայական միտքը: (**Գարեգին Նժդեհ**) Ցեղակրոնություն: Հիմնական սկզբունքները. *այն մարդը (և ազգը), որը սեփական*

ձախողումների, անհաջողությունների պատճառը նախ և առաջ իրենից դուրս է փնտրում (և ոչ իր մեջ), փորում է այն փոսը, որի մեջ ինքն ընկնելու է: Այն մարդը (և ազգը), որն իր հզորանալու աղբյուրը նախ և առաջ իր մեջ, իր հոգու մեջ չի փնտրում, այլ դրսում, կռում է սեփական շղթաները: Ազգային գաղափարախոսության հիմնահարցերը. **Հայկ Ասատրյան:**

Երկրորդ Բաժին

Թեմա 1
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Գիտության փիլիսոփայության հիմնախնդիրը փիլիսոփայական ուսմունքների բազմազանության համատեքստում: Պոզիտիվիստական և հետպոզիտիվիստական դիրքերից (Կ.Պոպերի, Ը. Կունի, Պ. Ֆեյերաբենդի և ուրիշների հայեցակարգերը) գիտության նկատմամբ տրամաբանական-իմացաբանական մոտեցումների քննադատական վերլուծությունը:

Փիլիսոփայության և բնագիտության դաշինքի գաղափարը: Բնագիտությունից փիլիսոփայական հետևությունների անխուսափելիությունը: Գիտության տերմինաբանական ապարատի տրամաբանական-իմացաբանական վերլուծությունը՝ գիտական տեսություն կառուցելու նպատակով:

Մատերիալիստական դիալեկտիկան որպես գիտական որոնումների ռազմավարություն: Մեթոդաբանության ժամանակակից մեկնաբանությունները:

Թեմա 2
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գիտության համակարգային բնույթը: Նրա ածանցյալ լինելը մարդկանց առարկայական գործունեությունից:

Գիտական իմացությունը՝ որպես մարդու նպատակահարմար գործունեության բարձրագույն մասնագիտացված ձև, ուղղված է օբյեկտիվորեն ճշմարիտ և հավաստի գիտելիքի արտադրությանը:

Իմացության գիտական և նախագիտական մակարդակների տարբերիչ հատկանիշները: Փիլիսոփայական և գիտական գիտելիքների պատմական փոխկապակցությունը: Փիլիսոփայական իմացության դերը: Գիտությունը որպես գիտելիքների համակարգ, որպես նոր գիտելիքի մշակման գործընթաց, որպես սոցիալական ինստիտուտ և մշակույթի առանձնահատուկ բնագավառ: Գիտության փոխգործողությունը աշխարհի իմացության այլ ձևերի հետ: Անհատական իմացություն և անձնական գիտելիք:

Գիտության կառուցողական տարրերը՝ օրենքները, հասկացությունները և տեսությունները: Օրենքը որպես գիտական գիտելիքի համընդհանրության ձև: Օրենքների օբյեկտիվության և տիպաբանության

հիմնախնդիրը. բնության օրենքներ և հասարակության օրենքներ, օբյեկտիվ աշխարհի օրենքներ և գիտության օրենքներ, էմպիրիկ և տեսական օրենքներ: Ըստ ընդհանրության աստիճանի օրենքների տիպաբանությունը:

Տեսական ընդհանրացումը գիտության առաքելությունն է: Տեսությունը՝ որպես ուսումնասիրվող առարկայի էության իմացություն:

Բնական, հասարակական և տեխնիկական գիտություններ: Հիմնարար և կիրառական գիտությունների բաժանման չափանիշները, դրանց կարևորությունը ցանկացած գիտության համար: Դասական և ոչ դասական գիտությունների պատմական դասակարգման իմաստն ու նշանակությունը: Միջառարկայական ուսումնասիրություններ, նրանց օբյեկտիվ անհրաժեշտությունը և իմացության գործընթացների արդյունավետության բարձրացման գործոնները: Գիտությունների ինքնուրույնությունը: Գիտնականների քաղաքացիական պատասխանատվությունը: Արդյո՞ք իրավունք ունեմ քաղելու այն ամենը, ինչին ձեռքս հասնում է…

Թեմա 3
ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ: ԳԻՏՈՒԹՅԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԻՄՆԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ:

Անտիկ շրջանի տարերային էմպիրիկ գիտելիքը (նախագիտությունը) և բնափիլիսոփայությունը՝ որպես ձևով տեսական գիտական գիտելիքի կազմավորման անմիջական նախադրյալ: Անտիկ բժշկական դպրոցների ծնունդը և զարգացումը:

Գիտությունը և աստվածաբանությունը միջնադարյան համալսարաններում: Հայ միջնադարյան դպրոցներ (Տաթևի համալսարանը, Գլաձորի համալսարանը և այլն): Սխոլաստիկական և աստվածաբանական բանավեճերը: Փորձնական գիտելիքների ձևավորումը (Ֆ. Բեկոն, միջնադարի բժշկական դպրոցներ):

Դասական բնագիտության ծագումը և գիտության առանձնացումը «մետաֆիզիկայից»: Փորձնական գիտության ծագման սոցիոմշակութային նախադրյալները, գիտական հանրույթների կազմավորումը:

Գիտությունների ակադեմիան և գիտության կազմակերպչական-կառավարչական հիմքերը: Հասարակական գիտությունների կազմավորումը՝ պատմության փիլիսոփայությունը (Վիկո, Վոլտեր), «սոցիալական ֆիզիոլոգիան» (Սեն-Սիմոն), սոցիոլոգիան (Օ.Կոնտ) և այլն: Բնության և մշակույթի մասին գիտությունների շեշտված հակադրությունը 19-20 - րդ դարերում որպես ժամանակակից սցիենտիզմի և հակասցիենտիզմի նախադրյալ (Գ. Ռիկկերտ և ուրիշներ):

Գիտական գիտելիքի զարգացման ժառանգորդվածությունն ու նորարարությունները, համապատասխանության սկզբունքը (Ն.Բոր) և հարացույցների հերթափոխությունը (Թ.Կուն):

Գիտական գիտելիքների կուտակմանը համընթաց գիտության զարգացման տեմպերի արագացումը: Գիտությունների տարբերակման և ինտեգրման, միջառարկայական կապերի սերտաճման ընդհանուր օրինաչափությունները: Մաթեմատիկան և համակարգիչը գիտությունների համակարգում:

Գիտական հեղափոխությունների էությունը: Գիտությունը և հասարակությունը: Գիտությունը և կրթությունը: Գիտության օգտակար գործողության գործակիցը: Գիտության սոցիոլոգիան: Գիտությունը որպես սոցիալական ինստիտուտ: Գիտական դպրոցներ: Գիտության և գիտնականի հեղինակությունը հասարակական գիտակցության մեջ:

Ժամանակակից գիտության արժեկողմնորոշումները և գիտնականի էթիկան:

Թեմա 4
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գիտական գիտելիքը որպես զարգացող բարդ համակարգ: Գիտական գիտելիքի էմպիրիկ և տեսական մակարդակները: Գիտության զարգացման էմպիրիկ մակարդակը, բնորոշ հատկանիշները և տեսականի հետ փոխկապակցությունը: Էմպիրիկ գիտելիքի հիմնական մեթոդները՝ դիտարկում, չափում և գիտափորձ:

Դիտարկումը, նրա օբյեկտիվության երաշխիքները և ձեռքբերման անհրաժեշտ պայմանները: Ինքնադիտարկման (ինտրոսպեկցիայի) մեթոդի դերը բժշկության և հոգեբանության մեջ:

Չափումը, չափման չափանմուշի ընտրության և հիմնավորման հանգուցախնդիրը:

Գիտափորձ. տեսակները: Կենդանիների և մարդու մասնակցությամբ անցկացվող գիտափորձի էթիկան, որակական բնութագրերը: Սոցիալական, տնտեսական, քաղաքական, կլինիկական գիտափորձ:

Օրենք հասկացությունը: Օրենքի միջոցով գիտության հիմնարար հասկացությունների սահմանումը:

Հիպոթեզը՝ որպես գիտական գիտելիքի զարգացման ձև, չհաստատված տեսություն: Հիպոթեզների տեսակները, նրանց ներկայացվող գիտական պահանջները:

Տեսությունը՝ որպես այս կամ այն գիտության փոխկապված հասկացությունների և կառուցողական սկզբունքների համակարգ: Տեսությունների տեսակները (հիմնարար և կիրառական, տրամաբանական-մաթեմատիկական, բովանդակային և այլն): Տեսությունների գործառույթները (նկարագրություն, բացատրություն, կանխատեսում):

Տեսությունների ձևավորման դասական և ոչ դասական տարբերակներ: Վերիֆիկացիայի և ֆալսիֆիկացիայի՝ որպես տեսությունների գիտականության չափանիշների գաղափարները: Տեսությունը և պրակտիկան:

Գիտական գիտելիքի տեսական մակարդակում գործադրվող հիմնական մեթոդները: Անալիզը և սինթեզը՝ (վերլուծում և համակցում) որպես բովանդակության իմաստավորման միջոցներ: Դասակարգումը որպես վերլուծության (անալիզի) տեսակ: Ինդուկցիան որպես նոր գիտելիքի ստացման մեթոդ: Դեդուկցիան որպես կշռադատության (մտահանգման) հիմնական եղանակներից և հետազոտության մեթոդներից մեկը: Տեսության կառուցման հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդը: Դեդուկտիվ գիտությունները և տեսության կառուցման աքսիոմատիկ մեթոդը: Մաթեմատիկական մեթոդը որպես զարգացած գիտության քանակական օրինաչափությունների բացահայտման միջոց: Տարբեր գիտություններում մաթեմատիկայի կիրառությունը և գիտությունների մեջ մաթեմատիկայի ներթափանցումը:

Մոդելավորումը որպես որոշ օբյեկտների բնութագրերի վերարտադրությունը մեկ այլ օբյեկտի վրա: Վերջին օբյեկտը կոչվում է մոդել (նմանակ): Մոդելի և բնօրինակի հարաբերակցությունը:

Մոդելների դասակարգումը՝ «ֆիզիկական» և «մաթեմատիկական» մոդելներ: «Ֆիզիկական» և «մաթեմատիկական» մոդելները կարող են լինել «լրիվ կամ մասնակի» և ներկայացնել օբյեկտի որոշակի հատկությունները կամ նրա կատարած գործառույթները (ֆուկցիոնալ մոդել):

Մոդելների հիմնական արժանիքներն են. համընդհանրությունը, հարմարությունը, հետազոտության արագությունը և էժանությունը: Մոդելների մեթոդը՝ հիմնված տարբեր բնույթի օբյեկտների (և ամենից առաջ կենդանի օրգանիզմների և մեքենաների) կատարած գործառույթների նմանության վրա, որպես կիբեռնետիկայի հիմքերից մեկը: Մոդելների իմացաբանական գործառույթները (ֆունկցիաները) նկարագրական, չափման, մեկնաբանական, բացատրական և կանխատեսման:

Մոդելավորումը բժշկության մեջ: Կենդանիների և մարդու հիվանդությունների վերարտադրության նախադրյալներն ու հնարավորությունները:

Աշխարհի գիտական պատկերը որպես գիտական իմացության առանձնահատուկ բաղադրատարր (գիտական գիտելիքի համակարգայնացման ձև, հետազոտական ծրագիր): Աշխարհի մասնավոր գիտական պատկերները՝ ֆիզիկական, կենսաբանական և այլ:

Գիտության փիլիսոփայական հիմքերը: Փիլիսոփայական գաղափարների և սկզբունքների դերը գիտական գիտելիքների հիմնավորման գործում:

Թեմա 5
ՍՈՑԻԱԼ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Գիտության միասնությունը, բնական և սոցիալ-հումանիտար գիտությունների հարաբերակցությունը: Մեթոդաբանական նատուրալիզմ՝ հումանիտար գիտելիքների հանգեցումը բնագիտական գիտելիքի: Բնագիտական և սոցիալ-հումանիտար գիտությունների մեթոդաբանությունների մերձեցման և փոխհարստացման միտումները:

Հումանիտար գիտությունների առարկան: Ցեղի, տեսակի և անհատի հիմնախնդիրը հումանիտար գիտություններում: Մարդը և հասարակությունը՝ ըստ փիլիսոփայության պատմության տարբեր դարաշրջանների բնորոշման: Մարդու, որպես կենդանի օրգանիզմի լեզվաբանական մոդելը (Մ. Ֆուկո): Բազմակարծությունը հումանիտար գիտություններում:

Մարդու զարգացումը որպես համագիտական խնդիր: Տարբեր գիտությունների ներդրումը մարդու զարգացման հիմնախնդիրների իմաստավորման գործում: Մարդու զարգացման նկատմամբ կոմպլեքսային մոտեցումը:

Մարդու հոգևոր աշխարհը. կենսագործունեության ոլորտները և գլխավոր արժեքները: Գեղեցիկը, ճշմարիտը, բարին՝ մարդու հոգևոր աշխարհի գլխավոր արժեքները:

Բաժին երրորդ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Թեմա 1. Արդիականության հասկացությունը:

Արդի դարաշրջանի բնույթը և առանձնահատկությունները, նրա շրջափուլերը: Դարաշրջանի սկզբնական փուլը՝ (1914-1918), երկրորդ փուլը՝ (1939-1945): Երկբևեռ աշխարհի առանձնահատկությունները: Սոցիալիզմի համակարգի փլզումը (1987-1990) և ԽՍՀՄ փլզումը (1991): Հետխորհրդային հասարակություններ. արդիականացման տեսություններ:

Թեմա 2. Արդիականության հոգևոր իրադրությունը:

Գիտատեխնիկական հեղափոխությունն ու նրա հետևանքները: Պետական ապարատի հզորության աճը: Արդի հասարակության սպառնալիքներն ու վտանգները: Հետդասական մշակույթի առանձնահատկությունները:

Թեմա 3. Լեզվի, գիտակցության, հաղորդակցության հիմնախնդիրները XX դ. փիլիսոփայության մեջ:

Լեզվի փիլիսոփայությունը: Հերմենևտիկա: Ֆենոմենոլոգիա:

Թեմա 4. Արդի սոցիալական փիլիսոփայության առանձնահատկությունները:

Սոցիալական փիլիսոփայությունը և սոցիալական գիտությունը: Սոցիալական իրականության դասական կերպարից անցումը հետդասական կերպարին: Ինտերսուբյեկտիվության հասկացությունը: Արդիականացման տեսությունները: Արդիականացմումը և լոկալ քաղաքակրթությունները: Մոդերոնիզմ և հետմոդեռնիզմ:

Թեմա 5. Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը:

Երաշխավորված առաջադիմության նկատմամբ հավատի բացասական կողմերի գիտակցումը: Պատմականի էությունը: Պատմության իմաստը: Պատմության մեկնաբանության և իմացության հարցերը:

Թեմա 6. Փիլիսոփայական մարդաբանությունը:

Մարդու հիմնախնդիրը որպես կենտրոնական փիլիսոփայական թեմա: Փիլիսոփայական մարդաբանության հասկացությունը:

Թեմա 7. Մշակույթի փիլիսոփայություն:

Մշակույթի փիլիսոփայական իմաստավորման հրատապությունը: Մշակույթի հասկացությունը: Մշակույթի հակասությունները: Մշակույթի պատմական դինամիկան:

Թեմա 8. Գլոբալ հիմնախնդիրների փիլիսոփայությունը:

Գլոբալ հիմնախնդիրների հասկացությունը: Գլոբալ գործընթացների ուսումնասիրության մեթոդաբանությունը: Գլոբալ մոդելավորում: Գլոբալ հիմնախնդիրների դասակարգումը: Արդի գլոբալիստիկայում շրջադարձ դեպի մարդը: Գլոբալ գիտակցություն:

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Փիլիսոփայության առարկան և մեթոդը
2. Փիլիսոփայությունը հոգևոր մշակույթի համակարգում
3. Փիլիսոփայություն առարկայի և դերի փոփոխությունները փիլիսոփայության պատմության մեջ
4. Փիլիսոփայությունը և աշխարհայացքը
5. Փիլիսոփայության, առասպելաբանության և կրոնի հարաբերակցությունը
6. Փիլիսոփայության ծագումը
7. Փիլիսոփայության գործառույթները
8. Փիլիսոփայությունը և գիտությունը
9. Հին հունական փիլիսոփայության ընդհանուր բնութագիրը
10. Սենսուալիզմի (էմպիրիզմի) և ռացիոնալիզմի էությունը
11. Ի.Կանտի փիլիսոփայության բնորոշ գծերը
12. Գ.Հեգելի փիլիսոփայական համակարգը: Հեգելյան դիալեկտիկայի էությունը
13. Իմացության օբյեկտը և սուբյեկտը
14. Կեցությունը՝ որպես փիլիսոփայության հիմնական հասկացություն: Կեցության հիմնական ձևերը
15. Օբյեկտիվ և սուբյեկտիվ դիալեկտիկան
16. Դետերմինիզմի սկզբունքները: Պատճառ և հետևանք
17. Նոր ժամանակի փիլիսոփայության ընդհանուր բնութագիրը
18. Գիտության սոցիալական գործառույթները

19. Մեթոդի խնդիրը փիլիսոփայության մեջ
20. Բրիտանական էմպիրիզմի ակունքները. Ջ.Լոկկ, Ջ.Բերկլի,Դ.Հյում
21. Աշխարհի նկատմամբ մարդու արժեքային վերաբերմունքը: Արժեքը որպես փիլիսոփայության հիմնախնդիր: Արժեքների դասակարգումը
22. Փորձնական և տեսական գիտելիքները: Փորձնականը և տեսականը բնագիտության մեջ
23. Պոզիտիվիզմի փիլիսոփայությունը: Նրա տարատեսակները
24. Էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը
25. Գիտակցության մոդելավորման, արհեստական ինտելեկտի (բանականության) ստեղծման հիմնախնդիրը
26. Գիտակցության հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ: Մարդու հոգեկանը. ենթագիտակցություն, գիտակցություն, ինքնագիտակցություն
27. Իմացության տրամաբանական ձևերը
28. Կասկածամտությունը և ագնոստիցիզմը փիլիսոփայության մեջ
29. Պրակտիկան՝ որպես իմացության հիմք և նպատակ և ճշմարտության չափանիշ
30. Հասարակության կառուցվածքը, հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր ոլորտները
31. Օբյեկտիվ ճշմարտությունը: Հարաբերականը և բացարձակը ճշմարտության մեջ
32. Մարդու հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ: Կենսաբանականը և սոցիալականը մարդու մեջ
33. Գիտության ծագումը և էությունը: Գիտության փիլիսոփայական հիմքերը
34. Զգայականի և բանականի հարաբերակցությունը իմացության մեջ
35. Գիտելիքի մակարդակները: Գիտական և առօրեական գիտելիք
36. Գիտության համակարգը և կառուցվածքը
37. Իմացության զգայական աստիճանի ձևերը
38. Փորձային հետազոտման գիտական մեթոդները
39. Անհրաժեշտություն և պատահականություն
40. Մարդու ազատությունը որպես արժեք: Մարդու իրավունքների և ազատությունների արդի հիմնախնդիրները
41. Տեսական հետազոտման գիտական մեթոդները
42. Գիտակցությունը և լեզուն: Լեզվի դերը իմացության գործընթացում
43. Զարգացումը որպես փիլիսոփայական կատեգորիա: Զարգացման մետաֆիզիկական և դիալեկտիկական կոնցեպցիաները
44. Վերլուծում և համադրում
45. Քանակական և որակական փոփոխությունները: Որակական փոփոխության մեխանիզմը
46. Հասարակությունը և անձը

47. Քանակ, որակ, չափ: Որակական փոփոխության հիմնական տեսակները
48. Մարդը որպես համագիտական հիմնախնդիր
49. Հասարակությունը և բնությունը: էկոլոգիայի արդի հիմնախնդիր-ները
50. Հնարավորություն և իրականություն
51. Ա.Շոպենհաուեր: Ապրելու կամքը
52. Ինդուկցիան և դեդուկցիան
53. Տարբերությունը և հակասությունը: Հակասությունը որպես զարգացման աղբյուր
54. Դիալեկտիկական բացասման էությունը զարգացման գործընթացում
55. Արժեքային գործոնի դերը գիտական հետազոտման մեջ
56. Հասարակական գիտակցության կառուցվածքը, հիմնական ձևերը և զարգացման օրինաչափությունները
57. Ֆ.Նիցշե. իշխելու կամքը
58. Մաս, ամբողջ, համակարգ: Համակարգային օբյեկտների տիպերը: Ամբողջը և մասը նորմայում և պաթոլոգիայում
59. Մարդու թեման որպես փիլիսոփայության հիմնախնդիր
60. Գիտակցականը և ենթագիտակցականն իմացության մեջ
61. Օրենք և օրինաչափություն
62. Մարդկային կյանքի իմաստի հիմնախնդիրը
63. Ստեղծագործության և ինտուիցիայի դերը գիտական հետազոտման մեջ
64. Պրագմատիզմը և նրա քննադատությունը
65. Գիտակցական ազատությունը
66. Փիլիսոփայական մարդաբանությունը
67. Պատմության ժամանակակից փիլիսոփայությունը
68. Մշակույթի փիլիսոփայությունը
69. Գլոբալ հիմնախնդիրների փիլիսոփայությունը
70. Գլոբալ մոդելավորումը
71. Լեզվաբանական փիլիսոփայությունը
72. Արդիականացման տեսությունները
73. Ի.Կանտի էթիկական ուսմունքի հիմնական գծերը
74. Սոկրատեսի փիլիսոփայության առանձնահատկությունները
75. Պլատոն. «Գաղափարների աշխարհի» ինքնիշխան թագավորությունը
76. Արիստոտել. «Առաջին փիլիսոփայությունը» որպես գերագույն իմաստություն:
77. Էպիկուրի կյանքի իմաստի փիլիսոփայությունը
78. Ստոիկների փիլիսոփայությունը
79. Աշխարհի ճանաչելիության հիմնախնդիրը
80. Գիտակցության կառուցվածքը և գործառույթները
81. Զ.Ֆրոյդի հոգեվերլուծական տեսությունը
82. Իրավական պետություն

83. Ժողովրդավարությունն ու նրա տեսակները
84. Մշակույթ, արժեքներ, իդեալներ
85. Գիտատեխնիկական առաջադիմությունն ու նրա սոցիալական հետևանքները

ՌԵՖԵՐԱՏՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Փիլիսոփայական գիտելիքի համակարգայնությունը և նրա կառուցվածքը
2. Միլեթյան դպրոցը և ընդհանուրի ու եզակիի հակադրության համընդհանուր ձևի մասին պարզունակ պատկերացումները (Թալես, Անաքսիմանդրոս, Անաքսիմենես)
3. Հերակլիտի օբյեկտիվ դիալեկտիկան՝ հակադրությունների պայքարը: Կրակը որպես բնության առաջնանյութ
4. Էլեաթների կամ Էլեացիների հին հունական փիլիսոփայական դպրոցի (Պարմենիդես և Զենոն) «Նեգատիվ դիալեկտիկան»
5. Պլատոնը որպես օբյեկտիվ իդեալիզմի հիմնադիր
6. Պլատոնի «դիալեկտիկան» որպես ձևական տրամաբանության ձևավորման կարևորագույն պատմական փուլ
7. Ընդհանուրի և եզակիի հիմնախնդիրը Արիստոտելի մեկնաբանությամբ

8. Արիստոտելը որպես սիլոգիստիկայի (ձևական տրամաբանության) հիմնադիր
9. Նոմինալիստների և ռեալիստների վեճը ունիվերսալիստների հիմնախնդրի շուրջ
10. Ֆ.Բեկոնը և Ռ.Դեկարտը որպես դասական գիտության մեթոդաբաններ
11. Նոր ժամանակների և Լուսավորության դարաշրջանի մատերիալիզմի նոմինալիստական միտումները
12. Բանականության պաշտամունքը նոր ժամանակների փիլիսոփայության մեջ
13. Դատողականությունը և բանականությունը, պատկերացումը և հասկացությունը Ի.Կանտի փիլիսոփայության մեջ
14. Գ.Հեգելի բացարձակ բանականության գաղափարը
15. Հեգելը ձևական և դիալեկտիկական տրամաբանության հարաբերակցության մասին
16. Պատմության մատերիալիստական ըմբռնումը
17. Նոր ժամանակների էմպիրիզմը և ռացիոնալիզմը՝ գիտելիքի աղբյուրի հիմնավորման խնդիրը
18. Զգայականի և ռացիոնալի դիալեկտիկան իմացության մեջ
19. Մտածողության պլյուրալիզմը և ճշմարտության հիմնախնդիրը: Օբյեկտիվ, հարաբերական և բացարձակ ճշմարտությունը
20. Պրակտիկան որպես իմացության նպատակ և աղբյուր, ինչպես նաև ճշմարտության չափանիշ
21. Գիտության փիլիսոփայության պոզիտիվիստական և հետպոզիտիվիստական մեկնաբանությունները
22. Լեզվաբանական փիլիսոփայություն, նրա ձևերն ու տեսակները
23. Գիտության փիլիսոփայության հասկացությունը: Մեթոդաբանությունը՝ լայն և նեղ իմաստներով
24. Պրակտիկ առարկայական գործունեության կառուցվածքը և գիտության տարբերիչ հատկանիշների համակարգայնությունը
25. Օրենքի հիմնախնդիրը փիլիսոփայության և բնագիտության մեջ
26. Հիպոթեզը որպես գիտության զարգացման ձև
27. Գիտությունների բազմազանությունը և նրանց դասակարգման հիմնախնդիրը
28. Գիտության զարգացման պատմությունը. ավանդույթներ և նորարարություններ
29. Գիտական հեղափոխությունների էությունը և գիտական պատկերացումների փոփոխության հիմքերը
30. Ժամանակակից գիտության արժեկողմնորոշումները և գիտնականի էթիկան
31. Գիտական իմացության էմպիրիկ մակարդակը, նրա տարբերիչ հատկանիշները և տեսականի հետ փոխկապակցվածությունը
32. Էմպիրիկ իմացության մեթոդները
33. Գիտափորձը, նրա տարատեսակությունները և հարաբերակցությունը տեսության հետ

34. Գիտական իմացության տեսական մակարդակը, նրա տարբերիչ հատկանիշները
35. Աշխարհի գիտական պատկերը որպես գիտական գիտելիքի առանձնահատուկ տարր
36. Մարդը որպես համագիտական հիմնախնդիր
37. Մարդու հիմնախնդրի նկատմամբ կոմպլեքսային մոտեցումը. դեկլարացիաներ, ձեռքբերումներ և բացթողումներ
38. Սոցիալ-կենսաբանական հիմնախնդիրների ընդհանրացման իմացաբանական և սոցիալական ակունքները
39. Սոցիոկենսաբանության հիմնահարցերը
40. Կյանքի ծագման հիմնահարցը և նրա նշանակությունը փիլիսոփայության համար
41. Մարդը որպես կենսաբանական համակարգ
42. Անտրոպոսոցիոգենեզը որպես անտրոպոֆիզիոլոգիայի կազմավորման գործընթաց
43. Աշխատանքը որպես մարդկային կյանքի վերարտադրության բնական պայման
44. Պատճառականության հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ
45. Էկոլոգիական հիմնախնդիրները և մարդու առողջությունը
46. Գիտատեխնիկական հեղափոխության սոցիալ-հիգիենիկ հետևանքները
47. Երկրաֆիզիկան և նոոսֆերան
48. Հասարակությունը և մարդկային անհատը
49. Զ.Ֆրոյդի հոգեվերլուծական մարդաբանությունը
50. Է. Ֆրոմի հումանիստական մարդաբանությունը
51. Մշակույթը որպես արժեք: Մշակույթ և քաղաքակրթություն
52. Տնտեսությունը և քաղաքականությունը
53. Մարդու հիմնախնդիրը փիլիսոփայության մեջ
54. Ֆիզիկական գիտելիքների տեսական և էմպիրիկ մակարդակները
55. Փիլիսոփայությունը որպես տեսական գիտելիքի պատմականորեն առաջին ձև
56. Անտիկ փիլիսոփայությունը
57. Նոր ժամանակների փիլիսոփայությունը
58. Հիպոթեզը որպես գիտության զարգացման ձև
59. Էմպիրիկ և տեսական գիտելիքի հարաբերակցությունն արդի գիտության մեջ
60. Նշանի հիմնախնդիրը և նրա նշանակությունը
61. Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա հետևանքները
62. Հայ միջնադարյան փիլիսոփայական միտքը
63. Կյանքը որպես բարձրագույն արժեք
64. Ա.Շվեյցերի բարոյագիտական ուսմունքը
65. Մաս, ամբողջ,համակարգ: Համակարգային օբյեկտների տիպերը:

66. Ժամանակակից գիտության արժեքային կողմնորոշումները և գիտնականի էթիկան
67. Տարածությունը և ժամանակը
68. Ագնոստիցիզմ: Ճանաչելի՞ է աշխարհը, թե ոչ: Չափանիշներ և սահմաններ
69. Հասարակությունը և բնությունը: Արդի էկոլոգիական հիմնախնդիրները

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածաշունչ
2. Ասատրյան Վ.Փիլիսոփայության ներածություն, Երևան 2004
3. Բրուտյան Գ.Ա. իմաստասիրական երկխոսություններ, Երևան, 1983
4. Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երևան 2001
5. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Երևան 1981
6. Դարբինյան Վ. Փիլիսոփայության ներածություն, Երևան 2006
7. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան 1994
8. Կանկե Վ. Փիլիսոփայություն , Երևան 2001
9. Հյում Դեյվիդ, Հետազոտություն մարդկային ըմբռնողության վերաբերյալ, Երևան 2003
10. Ռասել Բերտրան,Փիլիսոփայության պրոբլեմները,Երևան 2004
11. Շաքարյան Հր. Փիլիսոփայությունը ստեղծագործության գաղտնիքների որոնումներում, Երևան 2002
12. Ãóáèí Â.Ä. Ôèëîñîôèÿ, Ì. èçä-âî Ïðîñïåêò,2005
13. Äóáðîâñêèé Ä.È. Èíôîðìàöèÿ, ñîçíàíèå,ìîçã, Ì.,1980
14. Äþðêãåéì Ý.,Ñàìîóáèéñòâî: ñîöèîëîãè÷åñêèé ýòþä. Ì.1997
15. Êàìþ À., «Ïàäåíèå», «×óìà»
16. Êàíò È., Î ñïîñîáíîñòè äóõà ñèëîþ òîëüêî ïîáåæäàòü áîëåçíåííûå ùóùåíèÿ. Òðàêò.-û è ïèñüìà, Ì.1980
17. Êàðíåãè Ä. Êàê ïðèîáðåòàòü äðóçåé è îêàçûâàòü âëèÿíèå íà ëþäåé.
18. Ëèîòàð Æ.-Ô. Ñîñòîÿíèå ïîñòìîäåðíà. Èíñòèòóò ýêñïåðèìåíòàëüíîé ñîöèîëîãèè. ÑÏÁ. 1998
19. Ëîññêèé Í.Î.Óñëîâèÿ àáñîëþòíîãî äîáðà, Ì., 1991
20. Íàóêà è êóëüòóðà (ìàòåðèàëû «êðóãëîãî» ñòîëà) Âîïðîñû ôèëîñîôèè 1998 N 3
21. Àíòîëîãèÿ ìèðîâîé ôèëîñîôèè. Â 4-õ ò., Ì.,1969
22. Ðàññåë Á., ×åëîâå÷åñêîå ïîçíàíèå. Ì., 1957
23. Ðèê Óîððåí. Öåëåóñòðåìëåííàÿ æèçíü., Ì.,2004
24. Ðîãèíñêèé Ø.Ø. Ïðîáëåìû àíòðîïîãåíåçà, Ì.,1977
25. Ñàðòð Æ.-Ï. Ýêçèñòåíöèàëèçì- ýòî ãóìàíèçì, Ñóìåðêè áîãîâ. Ì.,1989

26. Ôèëîñîôèÿ íàóêè: ó÷åá.ïîñîáèå,ïîä ðåä. ä-ðà ôèëîñ.íàóê À.È. Ëèïêèíà. – Ì.:Ýêñìî, 2007
27. Ôðîëîâ È.Ò.,Æèçíü è ïîçíàíèå, Ì., 1981
28. Ôðîìì Ý. Äóìà ÷åëîâåêà. Ì.,1992
29. Ôðîìì Ý. Ïñèõîàíàëèç è ýòèêà, Ì., 1993
30. Õàéäåãåð Ì. ×òî ýòî òàêîå – ôèëîñîôèÿ? Âîïðîñû ôèëîñîôèè. 1993 N 8
31. Õðóñòàëåâ Þ.Ì. ôèëîñîôèÿ, Ì., 2004
32. Øâåéöåð À.,Áëàãîãîâåíèå ïåðåä æèçíüþ, Ì., 1992
33. Øàïîâàëîâ Â.Ô. Îñíîâû ôèëîñîôèè- Ì.,Ôàèð-ïðåññ,1999